# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№ 110-Ա

“ 17” հուլիսի 2013թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի N28-Ա, 2009ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N190-Ա, 2011ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N83-Ա, 2011ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի N119-Ա, 2012ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N14-Ա, 2012ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N15-Ա ԵՎ 2013ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10 N47-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության
օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և 70-րդ հոդվածի 2-ին մասի 1-ին ենթակետով,
համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թվականի հուլիսի 10-
ի <<Վ.Հակոբյանին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետ նշանակելու
մասին >>N697-Ա որոշման, ***որոշում եմ՝***

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2007թվականի մարտի 9-ի
<<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի արտակարգ իրավիճակների
հանձնաժողովի կազմը հաստատելու մասին>> N28-Ա, 2009թվականի նոյեմբերի 17-ի
<<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի գյուղատնտեսական նշանակության
հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին>>
N190-Ա, 2011թվականի ապրիլի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզում զորահավաքային մարմին ստեղծելու, դրա անհատական կազմը և
կանոնադրությունը հաստատելու մասին>> N83-Ա, 2011թվականի հուլիսի 11-ի
<<Երեխայի տարիքը որոշող մարզային հանձնաժողովի կազնը և լիազորությունները
հաստատելու մասին>>, 2012թվականի փետրվարի 7-ի <<Հողերի օգտագործման
ժամանակավոր սխեմաների և դրանց անբաժանելի մասը հանդիսացող
հողաշինարարական գործի կազմման աշխատանքները համակարգող, մշտական
գործող հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին>> N14-Ա և
2012թվականի փետրվարի 15-ի <<Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական
իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման մարզային
հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին>> N 15-Ա
և 2013թվականի ապրիլի 10-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2014-
2017թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի կազմման և
իրականացման մարզային զարգացման հանձնաժողովի, ծրագրի մոնիտորինգի և
գնահատման, ոլորտային աշխատանքային խմբերի անհատական կազմերը և ծրագրի
կազմման ժամանացույցը հաստատելու մասին>> N47-Ա որոշումներով հաստատված
հավելվածներում <<Ս.Խաչատրյան>> բառերը փոխարինել <<Վ.Հակոբյան>> բառերով:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի
2013թվականի հունիսի 13-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզպետի 2012թվականի փետրվարի 7-ի N14-Ա որոշման մեջ փոփոխություն
կատարելու մասին>> N96-Ա որոշումը:

3. Աշխատակազմի ղեկավարին.ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ.ՀԱԿՈԲՅԱՆ

2013թ. հուլիսի 17
ք. Կապան